# ՇԻՐԻՄՔ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐԱՑՆ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

# ԶԱՄՉԵԱՆԻ ԵՌԱՀԱՏՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Որպէս յիշատակեալ եմ յէջս անգլիա-ըէն նորատիպ Պատմութեան իմում ըզ-Հայոցն Հնդկաստանեայց[1], Հայք լեալ են հիմնադիրք Կալկաթա մեծահռչակ քա-ղաքիս յսկզբան ԺԷ դարուն։ (Տեսանել և «Բազմավէպ», վասն Մարտ–Յուլիս, 1936, էջ 94–96)։

Ի գալն անգլիացւոց ասա, ընդ ղեկա-վարութեամբ Ջօր Զարնակի, յամին 1690, եկին և մտին ընդ հավանաւորութեամբ նոցին և լուսիտանացիք, ըստ մեծի մա-սին խառնածինք, ի Բանդէլ կոչեցեալ քաղաքէն, ուր ունէին եկեղեցի մի կա-ռուցեալ յամին 1599, և որ կայ և մնայ ցայսօր, թէպէտ և վերաշինեալ և ընդար-ձակեալ յամին 1640։

Նորեկ լուսիտանացիք կառուցին ի Կալ-կաթա մատուռ մի փոքրիկ, յամին 1700, ծախիւք բարեպաշտոն կնոջ ուրումն՝ Մա-ըիա Տէնչ անուն, որոյ երկոտասանամեայ դուստրն էր առաջին ննջեցեալն որ ամ-փոփեցաւ անդ, յամին 1712։ Մատուռն գոլով փոքրիկ վասն աճող կաթոլիկ հա-սարակութեանն, ընդարձակեցաւ այն յա-մին 1720, ծախիւք ուրումն բարեպաշտի, Տիկին Սեբաստեան Շահ անուն։ Յետ կի-սոյ դարու անհրաժեշտ եղեւ դարձեալ ըն-դարձակել զեկեղեցին, ուստի յամին 1797, քանդեցին զնախկին եկեղեցին և կառուցին հոյակապ և ընդարձակ աղօթավայր մի որ կայ և մնայ ցայսօր ժամանակի և է մայր եկեղեցի կաթոլիկացն բնակելոց ի քաղաքիս մեծի, գոլով ի նմին ժամանա-կին և վանք նոցին։ Եկեղեցին օծաւ ի 27 Նոյեմբերի 1799 ամին, և նուիրեցաւ յանուն Սրբուհւոյ Աստուածածնի։ Գտանի եկեղեցին առ երի Նազարեթայ Հայոց ե-կեղեցւոյն, կառուցեալն յԱղայ Նազարայ Նոր–Ջուղայեցւոյ, մեծահամբաւ հայ վա-ճառականին, յամին 1724, և է զարդիս հնագոյն սրբավայրն ի Կալկաթա, և ի սրահի այնր գտանի և հնագոյն շիրիմ ի քաղաքի ասա, ի յիշատակ հայ կնոջ ու-րումն, հանգուցելոյ յամին 1630։ (Տե-սանել «Բազմավէպ» վասն Մարտ–Յու-լիս, 1936 ամին, էջ 95)։

Եթէ գրեցի զհամառօտ պատմութիւն հիմնարկութեան հինաւուրց և պատմական եկեղեցւոյն կաթոլիկաց, այդ այնու պատ-ճառաւ էր զի գտանին յայդմիկ եկեղեցւոջ խնկելի շիրիմք Հայ ննջեցելոց, թուով մետասան, թէպէտեւ լեալ են ի հնումն ա-ւելի քան զայդ, այլ դժբախտաբար ան-հետացեալ են այնոքիկ ի ժամանակի շի-նութեան նոր եկեղեցւոյն, յամին 1797–1799։ Զկայ այսօր շիրիմ Հայր Սուքիասայ Աղամալեան, ի Մխիթարեան միաբանու-թենէ վենետկոյ, որ հանգեաւ ի Տէր, ասա ի Կալկաթա[2], և ամփոփեցաւ յեկեղեցւոջ յայնմիկ, մեծաւ և փառաւոր հանդիսիւ, յ'18 մարտին 1789 ամին։ Ի սրահի ե-կեղեցւոյս կայ և դամբարան Կարապետի Մկրտիչ Մուրատի, եղբօր ազգային մեծ բարերարին Սամուէլ Մուրատի։ Եւ ի միջի

1. **Armenians in India**, from the earliest times to the present day, by Mesrovb J. Seth. M. R. A. S. Calcutta. 1937. Published by the author at No. 9, Marsden Street. Price 15 shillings.

2. Հ. Յովհաննէսն մեր Թովմաճանեան ի կենսագրու-թեան իւրում (ժեռազիր, էջ 363) ասէ. «Եւ Հ. Սու-քիասն Աղամալեան... գնաց ի Պենկալայ և անդ մեռանի 1789»։ Ի Պենկալա գնէ և «Մխիթար» բացարիկ թերթ. հրա. յ200ամեայ յոբելինի Մխիթ. Ուխտիս, 1901 (յէջ, 218)։ — ԾԱՆՕԹ. ԽՄԲ. «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի